ՀՀ Արմավիրի մարզպետարանը հայտարարում է ներքին մրցույթ՝ մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի (ծածկագիր՝ 93-1.2-Ղ4-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար

ՀՀ Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի (ծածկագիր՝ 93-1.2-Ղ4-1) պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկատվությունը ներառված է պաշտոնի անձնագրում, որի էլեկտրոնային օրինակը կցվում է:

Ներքին մրցույթին կարող են մասնակցել տվյալ մարմնի հանրային ծառայողները և քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողները:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի (ծածկագիր՝ 93-1.2-Ղ4-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները պետք է անձամբ ՀՀ Արմավիրի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժին (ք. Արմավիր, Աբովյան 71) ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (ձևը լրացվում է տեղում),
2. անձնագիր կամ նույնականացման քարտ՝ պատճեններով (եթե անձը նույնականացման քարտ չի ներկայացնում, ապա անհրաժեշտ է ներկայացնել հանրային ծառայության համարանիշ կամ անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանք կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանք՝ պատճեններով),
3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով,
4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով,
5. արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկ՝ պատճենով կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայական՝ պատճենով,
6. մեկ լուսանկար՝ 3Х4 չափսի:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են 2020 թվականի օգոստոսի 13-ից 2020 թվականի օգոստոսի 24-ը ներառյալ՝ աշխատանքային օրերին: Դիմումները յուրաքանչյուր աշխատանքային օր ընդունվում են ժամը 10:00-ից 12:30-ը և 14:30-ից 17:00-ը: Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2020 թվականի **սեպտեմբերի 23-ին՝ ժամը 12:00-ին**, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի վարչական շենքում (հասցե՝ ք. Արմավիր, Աբովյան 71, վարչական շենք): Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2020 թվականի **սեպտեմբերի 25-ին՝ ժամը 11:00-ին**, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի վարչական շենքում (հասցե՝ ք. Արմավիր, Աբովյան 71, վարչական շենք): Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի «Հարցարան» ձևաչափով:

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի **«Հարցարան»** ձևաչափով:

Հիմնական աշխատավարձը 256623(երկու հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր քսաներեք) ՀՀ դրամ է:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

Թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 4, 6-11, 13, 16-21, 37,

հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120807

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 2, 6 , 9, 10, 35, 36, 37, 38

հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131562

«Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենք. Հոդվածներ՝ 3, 5-7, 9-18

հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137110#

Հողային օրենսգիրք, հոդվածներ՝ 68, 101
հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=144507

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 3, 10, 14^2
հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=144509

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 4 , 6 , 13-16, 18, 19 , 22, 24, 26, 38, 82

հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143946

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 27, 35, 63, 65

հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137941

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, հոդված՝ 219^1
Հղումը՝
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143877http://www.irtek.am/views/act.aspx?aid=150017

<<Համատիրության մասին>> ՀՀ օրենք, հոդված՝ 9
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140217

«Ատոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 3
Հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=144497

ՀՀ կառավարության 19.03.2015թ <<ՀՀ-ՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 596-Ն որոշում, կետ 100, 171 http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=98209

ՀՀ կառավարության 31.12.1999թ. <<ԱՌԱՆՁԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ, ԻՐԱՑՄԱՆ ՓԱՍՏԱՑԻ ԳՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՄԻՁԻՆ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՅԴ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 802 որոշում
http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=114877

ՀՀ կառավարության 23.07.2015թ <<ՀԱՍՏԱՏՎԱԾ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ (ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ) ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի N 479 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> N 828-Ն որոշում
http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=99374

ՀՀ կառավարության 26.06.2009թ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 792-Ն որոշում
http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=82045

ՀՀ կառավարության 29.12.2005թ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏԵԼՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> N 2404 որոշում
http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=25812

ՀՀ կառավարության 16.08.2001թ. <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 762 որոշում
http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=66868

ՀՀ կառավարության 30.08.2007թ. <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 1042 որոշում
http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=46550

ՀՀ կառավարության 04.11.2010թ. <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՁՄԵՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 1942-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 1419 որոշում http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=65860

ՀՀ կառավարության 13.02.2014թ. <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 112-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 265-Ն որոշում
http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131577

ՀՀ կառավարության 09.08.1997թ. <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 330 որոշում
http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=6219

ՀՀ կառավարության 24.02.2005թ. <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԿԿԱՅԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ>> N 309 որոշում http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=22481

Գրավոր խոսք, Վազգեն Գաբրիելյան, երրորդ լրամշակված հրատարակչություն, Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012թ. էջեր՝ 70-129
http://www. parliament.am

Թեստում ընդգրկվող կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են տվյալ պաշտոնի համար սահմանված և Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ https://www.gov.am/am/announcements/item/346/ հրապարակված ընդհանրական կոմպետենցիաներից, մասնավորապես

- «Աշխատակազմի կառավարում» կոմպետենցիա,
հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/1.pdf
- «Խնդրի լուծում» կոմպետենցիա,
հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf

• «Որոշումների կայացում» կոմպետենցիա, հղումը՝
https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/7.pdf

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժին (հասցե՝ ք. Արմավիր, Աբովյան 71), հեռախոսահամար՝ 0237-2-16-29, էլեկտրոնային փոստի հասցե՝ armavir.andznakazmi.karavarum@gmail.com)

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի Մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) քաղաքաշինության վարչության պետ (այսուհետ՝ Վարչության Պետ), ծածկագիրը՝ 93-1.2-Ղ4-1

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Մարզպետին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Վարչության պետին անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության աշխատողները

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը կամ գլխավոր ինժեները, կամ գլխավոր ճարտարագետը, կամ գլխավոր ճարտարագետ-շինարարներից մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի Մարզ, քաղաք Արմավիր, Աբովյան 71

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Ապահովում է մարզի զարգացման ռազմավարության ծրագրի, Վարչության տարեկան աշխատանքային պլանի մշակման, մոնիտորինգի կազմակերպման աշխատանքները
2. Ապահովում է մարզի բնակավայրերի գլխավոր հատակագծերի կազմման և հաստատման ներկայացման, ինչպես նաև համայնքի գլխավոր հատակագծի, բնակավայրի գոտիավորման նախագծի մշակման առաջադրանքի և նախագծային փաստաթղթերի համաձայնեցումների գործընթացը:
3. Ապահովում է քաղաքաշինական գործունեության հսկողության իրականացումը, միջոցներ է ձեռնարկում ապօրինի շինարարության կանխման, կասեցման և վերացման ուղղությամբ:
4. Ապահովում է ինժեներական սպասարկում իրականացնող ծառայություններից օբյեկտների ինժեներական ենթակառուցվածքների նախագծման, կառուցման և շահագործման տեխնիկական պայմանների ստացման աշխատանքները, ապահովում է կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտներին հասցվելիք վնասների

փոխհատուցման գործընթացը:
5. Ապահովում է ստուգումների անցկացման գործընթացը տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև համապատասխան համայնքի վարչական տարածքում ինքնակամ և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին չհամապատասխանող շինարարության դեպքերի հայտնաբերման գործընթացը:
6. Ապահովում է հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության դեպքում քաղաքաշինական գործունեության նպատակով համայնքների ղեկավարների կողմից ներկայացված հողհատկացումների առաջարկությունների համաձայնեցման գործընթացի իրականացումը, հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի բացակայության դեպքում՝ կառուցապատման նախագծի ճարտարապետահատակագծային առաջադրանքի համաձայնեցման գործընթացի իրականացումը:
7. Ապահովում է առանց հողի կատեգորիայի փոփոխության քաղաքաշինական նպատակով առանձին հողամասի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկության համաձայնեցման գործընթացը, ապահովում լիազորված մարմնի եզրակացության հիման վրա տեղական նշանակության հուշարձանների փոփոխման թույլտվության գործընթացը:
8. Ապահովում է ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում կառուցապատման նպատակով համայնքների ղեկավարների կողմից ներկայացված հողահատկացումների առաջարկությունների և նախագծային փաստաթղթերի համաձայնեցման գործընթացը պետական կառավարման լիազոր մարմինների հետ, մարզային նշանակության ճանապարհների, թունելների, կամուրջների, այլ ինժեներական կառույցների շինարարության, պահպանման և շահագործման աշխատանքների իրականացումը և հանրապետական նշանակության ճանապարհների շինարարության, պահպանման ու շահագործման աշխատանքների կազմակերպումը:
9. Ապահովում է ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության ու շահագործման աշխատանքների մակարդակի գնահատման և ընդունման մեթոդիկայի համաձայն պետական բյուջեով նախատեսված մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների կատարումն ու ընդունումը:
10. Ապահովում է մասնակցությունը մարզային ավտոճանապարհների պաշտպանական գոտիներում տարբեր շինությունների, կոմունիկացիաների և գովազդների տեղադրման օրինականության ուսումնասիության աշխատանքները:
11. Ապահովում է մարզային ենթակայության ավտոճանապարհների և դրանց ճանապարհային երթևեկության կահավորանքի շինարարության, շահագործման, նորոգման և պահպանության աշխատանքների կատարման նկատմամբ հսկողության իրականացումը, պարբերաբար տեղեկությունների հավաքագրումը եղանակային պայմանների, մարզի ավտոճանապարհներին տիրող իրավիճակի, ավտոտրանսպորտի անցանելիության մասին:
12. Ապահովում է միջհամայնքային հասարակական տրանսպորտի և մարզային ենթակայության տրանսպորտային կազմակերպությունների գործունեության հետ կապված աշխատանքները և ներմարզային երթուղիներով փոխադրողների ընտրության մրցույթների արդյունքներով մարզպետի որոշմամբ պայմանագրերի կնքումը փոխադրող կազմակերպությունների հետ և միջմարզային երթուղիների ցանցի կազմակերպման հարցերով համագործակցությունը լիազոր մարմնի հետ:
13. Ապահովում է մարզի տեղական ինքնակառավարման մարմինների և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների կողմից բնակելի ֆոնդի պահպանման, շահագործման, նորոգման և սպասարկման կանոններին առնչվող խնդիրների համակարգումը:

14. Ապահովում է մարզի բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման միջոցառումների ծրագրերի մշակման և իրագործման աշխատանքները,
15. Ապահովում է Վարչության մասնակցությունը մարզի բնակավայրերի էներգետիկ ենթակառուցվածքների և աղբահանության բարելավման միջոցառումների ծրագրերի մշակման և իրագործման աշխատանքներին, մարզի բնակավայրերի գերեզմանատների գործունեության ուսումնասիրման և շահագործման ընթացիկ աշխատանքներին
16. Ապահովում է Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստումը, դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր մշակելը, ինչպես նաև Վարչության համապատասխան ոլորտային մասնագետների մասնակցությունը ԱԻ և ՔՊ մարզային միջոցառումներին:
17. Ապահովում է մարզում սուբվենցիոն ծրագրերով իրականացվող աշխատանքների վերահսկողությունը:

Իրավունքները՝

1) մշակել առաջարկություններ համապատասխան բնագավառին առնչվող օրենսդրության կիրառման պրակտիկայի և կատարելագործման վերաբերյալ.
2) համայնքների ղեկավարներին ներկայացնել հայտեր՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքի, ինչպես նաև ինժեներական ենթակառուցվածքներին միանալու տեխնիկական պայմաններ ստանալու համար:
3) Ստուգել կապալառու կազմակերպության տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների կողմից ներկայացված աշխատանքների ծավալները:
4) Բացահայտված ապօրինի շինարարության կանխման, կասեցման և հետևանքների վերացման գործընթացի շրջանակներում ուսումնասիրել հիմքերը:
5) Մարզի քաղաքաշինության ոլորտի միջնաժամկետ, ինչպես նաև ամենամյա բյուջետային ծախսերի ծրագրերի կազմման գործընթացի շրջանակներում դիմել համայնքների ղեկավարներին և Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներին՝ քաղաքաշինության ոլորտում առկա հիմնախնդիրները քննարկելու և համապատասխան ծրագրերում ներառելու նպատակով:
6) Մարզում քաղաքաշինական կադաստրի վարման գործընթացը կազմակերպելու նպատակով համայնքների ղեկավարներից հավաքագրել համապատասխան տեղեկատվություն:
7) Քաղաքաշինության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացի շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթային հիմքերը՝ քաղաքաշինության ոլորտին վերաբերող հարցերի ուսումնասիրության նպատակով:
8) Համագործակցել Մարզի շինարարական կազմակերպությունների հետ՝ ստանալով տեղեկատվություն տվյալ բյուջետային տարվա ընթացքում իրականացված շինարարական աշխատանքների վերաբերյալ, հրավերներ ներկայացնել նախաորակավորման փուլին մասնակցելու համար:
9) իրականացնել լիազոր մարմնի կողմից կազմակերպած միջմարզային և ներմարզային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների երթուղային ցանցերի համաձայնեցում:
10) Մարզի ճանապարհաշինության ոլորտի միջնաժամկետ ծախսային ծրագրի և բյուջետային հայտի կազմման նպատակով հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվություն:
11) Պարբերական հսկողության իրականացնել կապալառուի կողմից կատարվող աշխատանքի ընթացքի և որակի նկատմամբ՝ առանց միջամտելու կապալառուի գործունեությանը:
12) Վերահսկել աղբի և թափոնների վերամշակման աշխատանքների գործընթացը:
13) Մարզի խորհրդի և տեղական ինքնակառավարման մարմինների խորհրդակցությունների ժամանակ համայնքների ղեկավարներին և մասնակիցներին

տալ պարզաբանումներ փոփոխված և նոր ընդունված նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ.

14) մասնակցել քաղաքաշինության ոլորտի առաջնային խնդիրների բացահայտմանը, պետական աջակցության ծրագրերի մշակմանը և իրականացման մոնիթորինգին.
15) Վարչության առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված, ինչպես նաև Գլխավոր քարտուղարի գիտությամբ, հրավիրել խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների.
16) ըստ անհրաժեշտության ներկայացնել համապատասխան զեկուցումներ՝ իր կողմից սպասարկվող ոլորտին առնչվող համապատասխան մարմիններում, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից կատարվող աշխատանքների վիճակի մասին.
17) Գլխավոր քարտուղարին, ըստ անհրաժեշտության, ներկայացնել առաջարկություններ՝ Վարչության աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու համար.

Պարտականությունները՝

1) կազմակերպել օբյեկտների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման, կապալառու կազմակերպությունների ընտրության, շինարարության հեղինակային ու տեխնիկական հսկողության աշխատանքների իրականացման ընտրության գործընթացը:
2) Համայնքներում ինքնակամ և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին չհամապատասխանող շինարարության դեպքեր հայտնաբերելիս դիմել համապատասխան իրավասու մարմնին՝ ապօրինի շինարարության կանխման, կասեցման և հետևանքների վերացման առաջարկությամբ, ինչպես նաև տեղեկացնել պետական լիազոր մարմնին:

3) Մարզի քաղաքաշինության ոլորտի միջնաժամկետ, ինչպես նաև ամենամյա բյուջետային ծախսերի ծրագրերի կազմման գործընթացի շրջանակներում համապատասխան լիազոր մարմիններին ներկայացնել միջնաժամկետ ծախսային ծրագրերի հայտերը և մասնակցել դրանց քննարկմանը:
4) Մարզի տարածքում ֆինանսական տարբեր միջոցներով կապիտալ շինարարություն և հիմնանորոգում իրականացնող պատվիրատու կազմակերպությունների գործունեության բնագավառում իրականացնել մշտադիտարկման աշխատանքներ:
5) Մարզի տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանման գործընթացի շրջանակներում համայնքների ղեկավարներից ստացված փաստաթղթային փաթեթը համապատասխան եզրակացությամբ ներկայացնել վերադաս մարմինների համաձայնեցումներին:
6) Մարզի ճանապարհաշինության ոլորտի միջնաժամկետ ծախսային ծրագրի և բյուջետային հայտի կազմում, գլխադասային մարմնին ներկայացում և քննարկման աշխատանքներին մասնակցություն:
7) Մարզային (տեղական) նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների առկա վիճակի գնահատման, ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և ճանապարհաշինության ոլորտում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների ուսումնասիրության, ծրագրերի ու նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազման աշխատանքների ապահովում:
8) Համայնքների գործող գերեզմանատների մաքրության, աղբահանության, գերեզմանի

վկայականների տրամադրման և հողերի օգտագործման հատակագծերի մշակման գործընթացի շրջանակներում ի հայտ եկած թերությունների դեպքում դրանց մասին իրազեկել համապատասխան համայնքի ղեկավարին և առաջարկել ձեռնարկել համապատասխան միջոցներ դրանց վերացման ուղղությամբ:

9) Լիազոր մարմնին աղբի և թափոնների վերամշակման աշխատանքների կազմակերպման վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն:
10) քաղաքաշինության ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ Վարչության լիազորությունների շրջանակներում նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ փաստաթղթեր.
11) ապահովել համապատխան ոլորտի ռազմավարական ծրագրերի, հայեցակարգերի, օրենքների և իրավական այլ ակտերի նախագծերի մշակման աշխատանքները.
12) Գլխավոր քարտուղարին ներկայացնել Վարչության աշխատանքային ծրագրերը.
13) Գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ ապահովել Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստումը, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների մշակումը.
14) Գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ կատարել քաղաքացիների ընդունելություն.
15) այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանալ Վարչության առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1.Կրթություն, որակավորման աստիճանը

1.	Ուղղություն	ճարտարագիտություն, արդյունաբերություն և շինարարություն
2.	Ոլորտ	ճարտարապետություն և շինարարություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ճարտարագիտության կամ արդյունաբերության կամ շինարարության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ.

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Կառավարում արտակարգ իրավիճակներում
2. Բանակցությունների վարում
3. Ժամանակի կառավարում
4. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում

5. Փաստաթղթերի նախապատրատում
6. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ կամ մասնակցում է այդ խնդիրների լուծմանը: